



*Համարը* ՀՕ-284-Ն  
*Տիպը* Օրենք  
*Սկզբնաղբյուրը* ՀՀՊՏ 2020.06.17/63(1618) Հոդ.765  
*Ընդունող մարմինը* ՀՀ Ազգային ժողով  
*Ստորագրող մարմինը* ՀՀ Նախագահ  
*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 27.06.2020

*Տեսակը* Հիմնական  
*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Երևան  
*Ընդունման ամսաթիվը* 01.06.2020  
*Ստորագրման ամսաթիվը* 09.06.2020  
*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

**☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ՕՐԵՆՔԸ «ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

Ընդունված է 2020 թվականի հունիսի 1-ին

**«ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Անասնաբուժության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-137-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) **անասնաբուժական դեղամիջոց**՝ անասնաբուժության ոլորտում օգտագործվող նյութ կամ նյութերի միացություն (կենսապատրաստուկներ՝ պատվաստանյութեր, հիվանդությունների հարուցիչների ախտորոշման և նույնականացման հավաքածուներ և պատրաստուկներ, իմուն և գերիմուն շիճուկներ, իմունոգլոբուլիններ, արյան ֆրակցիաներ, կենդանիների հյուսվածքներից և օրգաններից ստացված բուժիչ և կանխարգելիչ պատրաստուկներ, մանրէական աճեցվածքներ և մանրէական տարատեսակներ, հորմոնային պրեպարատներ, թիրեոստատիկներ, բետաստատոգոնիստներ, բուսական, հանքային, քիմիական, քիմիադեղագործական ծագման նյութեր, պատրաստուկներ կամ միջոցներ՝ բուժիչ, ախտահանիչ, հակամանրէային, միջատասպան, կրծողների դեմ պայքարի, հակաճիճվային, հակաարյունապարազիտային, հակատզային ազդեցությամբ).»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հանրապետության նախագահ**

**Ա. Սարգսյան**

2020 թ. հունիսի 9  
Երևան  
ՀՕ-284-Ն